ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

ի պատասխան Ձեր 28.02.2024թ. հ.28-2024 գրության՝ տեղեկացվում է.

Երևանի ենթակայությամբ գործող մսուր-մանկապարտեզներում (այսուհետ՝ Հաստատություն) տարիքային խմբերը ձևավորվում են համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի «Նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» 76-Ն հրամանի պահանջների, ըստ այդմ՝ կրտսեր առաջին խմբերում (2-3 տարեկան) սաների առավելագույն թիվը 20 է, իսկ կրտսեր երկրորդ (3-4 տարեկան), միջին (4-5 տարեկան) և ավագ (5-6 տարեկան) խմբերում՝ 30:

Հաստատությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հրապարակված են Երևանի քաղաքապետարանի «yerevan.am» պաշտոնական կայքէջում: Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 23-ի «Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ Երևան քաղաքի բյուջեից ֆինանսավորման գործընթացը կանոնակարգելու, վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի նվազագույն հաստիքային միավորները և վարձատրության խմբերը հաստատելու մասին» N723-Ա որոշման հիման վրա ընթացքի մեջ են նոր հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի կազմման աշխատանքները: Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի **«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին»** N 515-Ն որոշման 19-րդ կետի՝ Հաստատություններում կամավորության սկզբունքով կարող են մատուցվել վճարովի լրացուցիչ կրթական ծառայություններ: Կախված լրացուցիչ կրթական ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցողների թվից՝ ձևավորվում են արտահաստիքային պաշտոնները համապատասխան աշխատավարձերով: Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 30-ի **«Երևանի համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքի ռեժիմը և երեխաներին պահելու տևողությունը սահմանելու մասին» 2833-Ա որոշմամբ՝** Երևանի «Նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքային ռեժիմը սահմանվել է ժամը 8:00-ից մինչև 17:30-ը, երեխաներին պահելու տևողությունը՝ ժամը 8:30-ից մինչև 17:30-ը, իսկ երեկոյան ժամերին պահելու տևողությունը՝ ժամը 17:30-ից մինչև 19:00-ը:

Տնտեսական ապրանքների և սննդի ձեռքբերումն ու մատակարարումն իրականացվում է «Գնումների մասին» օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն՝ մրցակցային և մեկ անձից գնման ընթացակարգերով: Գնման գինը գնումների բազային միավորը (1մլն ՀՀ դրամ) չգերազանցելու պահանջի պահպանմամբ մեկ անձից գնման ընթացակարգով հիմնականում տնտեսական ապրանքների ձեռքբերումն իրականացնում են Հաստատությունները: Մրցակցային ընթացակարգերից որևէ մեկով կազմակերպված գնման գործընթացի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները, որոնց հետ կնքվում են պայմանագրեր, հանդիսանում են մատակարարներ: Հաստատություններին 2024 թվականի ընթացքում սնունդ մատակարարելու համար մրցակցային կարգով կազմակերպված գնման գործընթացների արդյունքում պայմանագրեր են կնքվել «ԴԵԱԳԱ» ՍՊ, «ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲ, «ՊՐՈՎԻԶ» ՍՊ, «ՏԱԹՆԱՐ» ՍՊ, «ՍԱՎԱ» ՍՊ, «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՑ» ՍՊ, «ՄԱՐԿՈԳՐՈՒՊ7» ՍՊ, «ՎԵՆԴԱ» ՍՊԸ, «ԽԱՔ» ՍՊ ընկերությունների և Ա/Ձ «Սերգե Սերգեյան»-ի հետ:

Համայնքային բյուջեի միջոցների հաշվին Հաստատությունների համար գույքը ևս ձեռք է բերվում «Գնումների մասին» օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն՝ մրցակցային ընթացակարգերից որևէ մեկով կազմակերպված գնման գործընթացի արդյունքում կնքված պայմանագրի հիման վրա: Հաստատություններին 2023 թվականի ընթացքում գույք մատակարարելու համար մրցակցային կարգով կազմակերպված գնման գործընթացների արդյունքում պայմանագրեր են կնքվել «ՖՈՏՈՆ» ՍՊ, «ՄԵԳԱՕՖԻՍ» ՍՊ, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԳՅՈՂԱԿՅԱՆՆԵՐ» ՍՊ, «ԱԼԱՐԵԼԻ» ՍՊ, «ՕԼԱՆԴԱ» ՍՊ, «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊ ընկերությունների և Ա/Ձ «Կարեն Գևորգյանի» հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ